

ՔԱՏՈՒՆՈՐԻ ԱՊՐԱՆԻՍԻՆ

Պոչխարիոյ	համար
Տարեկան	12 Ֆր
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աւերիկայի	համար
Տարեկան	3 ռը.
Վեցամսեայ	1.50 »

Մանուկներու տղայի ստանդարտը 12 ամիսէն հասնում է 40 ս. 18 ամիսէն՝ 45 ս. 24 ամիսէն՝ 50 ս. 30 ամիսէն՝ 55 ս. 36 ամիսէն՝ 60 ս. 42 ամիսէն՝ 65 ս. 48 ամիսէն՝ 70 ս. 54 ամիսէն՝ 75 ս. 60 ամիսէն՝ 80 ս. 66 ամիսէն՝ 85 ս. 72 ամիսէն՝ 90 ս. 78 ամիսէն՝ 95 ս. 84 ամիսէն՝ 100 ս. 90 ամիսէն՝ 105 ս. 96 ամիսէն՝ 110 ս. 102 ամիսէն՝ 115 ս. 108 ամիսէն՝ 120 ս.

ՇԱԲԱԹ

R. P. Kalemcarian, Mechitaristengasse
(Austria) W. 4.
Mechitaristengasse
Vienna

Կարգադրութեան հասցի
Կարգադրութեան հասցի

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պոչխարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՄԱՍԻՆԻ ԱՊՐԱՆՈՒՄ, ՔԱՆՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ՝ ՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔՆԵՐԵՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱԲԱԹՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՆԴԸ ԲԱԺԱՆԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԻՆԵՐՈՒՆ

Մեր այն բաժանորդներէն եւ Գործակալներէն, որոնք դեռ իրենց հարկերը չեն մաքրած, կը խնդրուի որ փութան վճարել իրենց պարտքերը: Անոնք պէտք է գիտնան, որ պարտաճանաչութիւնը առարկանութիւն մըն է:

Պարկաստանի մեր բաժանորդները կարող են ուսական թղթադրամ գրկել ապահովագրութեան նամակներու մէջ, 1 րուպլին 2 Ֆր. 60 սնթ. հաշուով:

Շարժումի բաժանորդ գրուող բաժանորդը պէտք է կանխիկ վճարէ: Բայց մենք կ'ըստանանք ապրտարանքներ առանց բաժանորդի, իր անունին հետ բաժանորդը չը գրուանքու դիմումները կը մնան անհետանք:

ՊԱՏԵՐԱԶՍ

Պատերազմը ծագած է Մայրագոյն Արեւելքի մէջ—երկու համահասարակ հսկայ ուժերու միջեւ ահագ ու արեւնալի պատերազմ: Չորեքշաբթի կէս օրէ ի վեր կորոտան թշնամիներու թնդանթները կապոյտ ծովուն վրայ: Ռուսիա ուղեց ամէն կերպով խոստովիլ—և այսպէս ընելու ալ լուրջ պատճառներ ունէր: Բայց անկարելի էր խաղաղութիւնը պահպանել առանց իր գիրքը խախտելու:

Ճարտարապետներու յարկերու զանգուշակութիւնը ետեւէ ինկող բազմաթիւ բրիտանացի յոյժ մը՝ առաջին օրուէն յայտնուեցաւ տրամադրութիւն ու իր գրած խիստ պահանջներէն չուղեց կէտի մը մէջ անգամ զիջում ընել ցարբու կառավարութեան և վերջերս առանց այլեւս սպասելու Ռուսիոյ պատասխանին, խզեց յարաբերութիւնները ու առանց պաշտօնապէս պատերազմ հրատարակելու Պորթ Արթուրի մէջ յարձակում գործեց ուսական նաւատորմի զին վրայ: Յարը պաշտնած իր ամենակարող Աստուծուն ստիպ-

ուած եղաւ պատերազմ հրատարակել: Հիմա Ռուսիան պիտի մաքրուի Մայրագոյն Արեւելքի մէջ իր ձեռք ձգած առաջնականարդ գիրքը պահպանելու համար, իսկ ճարտար կուզէ ինքը միայն տէր ըլլալ Ասիոյ մէջ: Ասիան առիագիններուն համար, ահա ճարտարագիտութեան ընթացքը: Ասիացի խօսքը սակայն քաղաքակիրթ երկիրներու մէջ խորթ կը հնչէ. առիագի ըլլալ երոպայական հայեցողութեամբ կը նշանակէ վայրենի ու բարբարոս ըլլալ: Եւ ահա ճիշդ այս տեսակետին վրայ ալ հիմնուելով ուսերը կը պահանջեն, որ Ասիան ըլլայ երոպայացիներու այսինքն լռելիայն՝ երոպայի ուսերուն ձեռքին մէջ: Այս միտքը յայտնուած է ուսպաշտօնական թերթի մը մէջ, ի հարկէ ներկայ ճգնաժամային ըրոպէին քաղաքակիրթ երկիրներու համակրութիւնը իրենց կողմը շահելու համար: Բայց քննենք թէ ո՞րքան իրաւացի է այդ փաստը:

Այո, Ռուսիան իր աշխարհագրական դիրքով կրնայ երոպայի մէջ, բայց երոպայական քաղաքակիրթութեան ան զատուած է չինական պարսպանքով և այս հողի վրայ ստեղծած է ասիական բռնակալութիւն մը իր ամէն տղեղ կողմերով: Այդ միպետական Ռուսիան է, որ իր պլուրը ունենալով միահեծան կայսր մը վայրկեանի մը մէջ կը վճռէ միլիոնաւոր հպատակներու ճակատագիրը, «ուկազի» մը վրայ գրչի շարժումը մը կը կաշկանդէ ժողովուրդներու ազատութիւնը, կը խլէ անոնց իրաւունքները: Թէկուզ թէ անոնք ըլլան զարաւոր և անբռնաբարելի իրաւունքներ, թէկուզ թէ անոնք ըլլան մարդկային բնական ու տարրական իրաւունքներ: Ինչ երեկ պատահեցան այսօրինակ պաշտօնական աւաղակութիւններ, Հայաստանի մէջ, դեռ նոր է Ֆինլանտայի բռնաբարութիւնը, դեռ մեր յիշողութեանն չէ ջնջուած Լեհաստա-

նի մէջ կատարուած տխուր անցքերը: Ռուսաստանի բռնութիւնը և քաղաքակիրթը այսօր մինչեւ բերանը լեցուած են Ռուսերով, Լեհերով, Հայերով, Վրացիներով, որոնք դժբաղդ զոհերը աչտ աչտ սուլածանական բանտի մը գոթախոյն շարժարանքներէն ու տանջանքներէն:

Մեր կարծիքով այս Ռուսիան իրաւունք չունի իր բռնութեան քաղաքակիրթ երկիր մը լուսաւորեալ մարդկութեան համակրութիւն սպասել:

Եւ բռնակալ Ռուսիոյ հանդէպ կեցած է բնիկ ասիացի ճարտը հազար առաւելութիւններով: 1868 է ի վեր Միքատեան հրաժարած է իր միահեծան իրաւունքներէն և հաստատած է ազգ. երեսփոխանական ժողով մը, որը ընտրուելով ժողովրդէն կը կառավարէ երկիրը: Ճարտը իր իշխանութեան տակ չունի հեծող ու ճնշուած ժողովուրդներ, իր օրէնքները առնուած են երոպայէն, և ինչ երկար են, ճարտարապետ Սիպերիա մը, որ կաքտուրին երկրին ամէն յառաջադէմ ու մաքուր տարրերը:

Այս այսպէս ըլլալէ ետք մենք կը կարծենք, որ քաղաքակիրթ մարդկութեան համակրութիւնը պիտի ըլլայ ճարտի կողմը: Իրաւ է, չէ կարելի ուրանալ թէ ճարտարապետ մօնօլոնք են, բայց ճարտիոյ յազմանակով Ասիայէն ետ պիտի մղուի Ռուսիան և յառաջ պիտի անցնի անգլիական աղքատութիւնը, ու Անգլիա իր շեւ կը տանէ ժողովուրդներու համար ազատութիւն ու բարօրութիւն:

Հիմա երբ մենք այս խորհրդածութիւնները կընենք անդին չինական ժողովուրդ վրայ կորոտան թշնամիներու թնդանթները ահեղ ու բռնաբար ըրողներով, սարսափ ու մահու զարանգ ազդելով մարդկային զանգուածներու վրայ:

Ճգնաժամային այս ըրոպէին մէջ մեզ Հայերուս կը մնայ Ռուսիոյ համար բան մը միայն ցանկալ...

Ներքին ուժեղ ապստամբութիւն մը... և այն ասեւն այդ բռնակալութեան տակ հեծող ժողովուրդներու համար ծագած է Օրերու Օրը: Մենք բոլոր սրտէ կը ցանկանք այդ և կը գոչենք. «անկցի» Ռուսիան, կորսուի՝ ուսական բռնակալութիւնը մեր վրայէն...»

Մարգարեանի

ԴԱՇՆԱԿԱԿԱՆ ՏԷՏԱՅԻՆԵՐՈՒ

ԿՈՒՒՐ ԲԱՍՏՆՈՒՄ

Երգում 25 Նոյ. 1903

Փորձուած ու վիրաւոր ժողովրդի սրտէն, նորէն լուսեցաւ ապստամբութեան աղաղակը: Հայ յեղափոխական կրակի մասին պիտի խօսիմ, այս անչէջ ու հզօր կրակը, որ բռնկեցաւ Բասենի մէջ լեռներէն մինչեւ դաշտը: Անոնք որ այդ տեսան սակացին, և իրենց բոյներու մէջ քաշուած իժերը արիւնահեղ դէպքի մահաբաժանութիւնները իմանալով՝ կձկուեցան և խռովեցան: Թէտալի, ասոր մէջն է կրակը, որ երկիրէն կրկնայ, որ թուրքերու բնա հանգիստ չիտար:

«Ստուծոյ սիրուն համար— կըսէր պաղատանքով թիւրք պաշտօնեայ մը համիտէի քուրտ բէկին— երբ հրացանի պայթիւններ լսէք, շուտով մեզ օգնութեան հասեք, ազատեցէք մեզ այս կեալուրներէն...»:

Մինչեւ Բասենի դէպքը, թըշնամին կը մածէր— «Ի՞նչ կրնան մեզ ընել, այս կեալուրները, մեր ստրուկները: Կրնան յանդգնիլ դիմադրել նորին վեհափառութեան փատիշահի զօրքերուն»: Բայց երբ մաքառուք պայթեցաւ, միւսիւրմանը սարսափահար օգնութիւն կը գօչէին:

Բասենի դէպքէն յետոյ Համիտիները զէնքի կոչուեցան, կանոնաւոր զօրքերը կեդրոնի ծայրերը գրուեցան, Համիտիները աւելի հեռու դէպի սահմանազրուիւր զրկուեցան, 20.30 հոգիէ

բաղկացած ձիաւորներ խմբով
ամբողջ օրը կը շրջին, անոնք կը
ձերբակալեն ճանապարհորդներ
ունեն հարցաքննութեան կ'են-
թարկեն, Հայերու գիւղերը կ'ի-
ջեւանին, Իւջ Քիլիսէի մօտ գտ-
նուող ձուճան գիւղը այժմ 25
զօրք կայ, որ գիւղացիներուն
հաշուին կ'ապրին՝ բնակարան,
վառելիք, կերակուր ստանալով՝
Իւջ Քիլիսէ վանքի զօրքերուն թի-
ւը կրկնապատկուեցաւ, 30 հօգի
էին միայն, այսօր 60 են: Զօր-
քերը շատ խիստ հսկողութիւն
կ'ընեն, արեւը մարը չը մտած
գիւղացիներու դուրս չ'ըլլել կար
գիւղեն, անոնց խտտագին հարց
ու փորձի կ'ենթարկեն, եթէ գը-
րացի գիւղ մը այցելած ըլլան:
Զօրքերը անանկ կ'ակօժի մը մէջ
կ'ապրին, որ ամենադոյզն ազ-
մուկը իրենց կը կարծեցնէ թէ
Ֆէտայիներն են: Այս վերջին
օրերս նոյնիսկ Իւջ Քիլիսէ վան-
քին մէջ դէպք մը պատահեցաւ:
գիւղերուայ միջոցին զօրքերը,
իբր թէ լսած ըլլալով Ֆէտայի-
ներու աղմուկը, կ'ըսկսին հրա-
ցանները սարակաղաղակելով՝
«ոտես կը փախչին, ահա»: Բայց
ո՞վ է փախչողը, չը գիտեմ: Ի-
րենք իրենց շուքէն կը վախնան
թշուռականները...

Մէկ ուրիշ ծիծաղելի դէպք մը
տեղի է ունեցեր կարնոյ շրջա-
նին մէջ կարմիր վանք մենաս-
տանի մօտերը: Բասնի գէպքէն
յետոյ զինուոր մը անզգուշութե-
ամբ հրացանը կը պարպէ. առիկօ
պատճառ կը դառնայ մեծ անկար-
գութեան մը, դրացի զօրանոցի
մը զօրքերը ատոր վրայ կը վա-
զեն և կ'ըսկսին իրարու վրայ
հրացան պարպել աղաղակելով՝
«Ֆէտայիներ» և զիրար կ'ըս-
պանեն: Երբ կը լուսանայ աշ-
քերնուն կը պարզուի ծիծաղա-
շարժ և ողբերգական տեսարան
մը... զոհերու թիւը երեսունէն
աւելի է...

(Բրո Արմենիա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Տիպրիկ, 4 յուն, 1904

Ինչորովին ապահովութիւն չը
կայ, մինչեւ իսկ գիւղէն քաղաք
երթալու հրաման չկայ: Գիւղին
մէջ փակուած մնացած ենք. և
թէ հոս ալ հանգիստ թողնէին,
նորէն լաւ, բայց ամէն օր տուր-
քերու օրէնքներ կուգան Պոլսէն
և Սուլթանի հատարիմ պաշ-
տօնեաները ընդհուպ գործադ-
րութեան կըսկսին, իրենց կար-
միր տիրոջ աջքին լաւ երեւնա-
լու համար:

Ահա նոր տուրքերու ցանկը.
հաւերու համար 40 փր. տուրք,
աւանակներու համար 10 զրջ.
կաթնտու կովերու համար 20 զրջ.

ոչխարներու պահապան շուներու
համար 50 զրջ, ոչխարի համար
10 զրջ, պտղատու ծառերու հա-
մար 1էն մինչեւ 3 զրջ, կատ-
ուրի համար 10 զրջ, տան մէջ
պահուած շուներու համար 10 զրջ,
այն կիները որոնք որբեվայրի
մնացած են ամիսը 20 զրջ տուրք,
որպէս զի ստիպուին ամուսնանալ,
իսկ ամուսնացեալներու համար
շաբաթական 40 փարայ: Ահա
այս տուրքերու հաւաքումը սկը-
սուած է որպէսզի պետութեան
ծակ գանձարտնը լեցուի: Ուր-
կէ կրնանք գտնել այդ չափ
գրամ որ կարողանանք պատիժ-
ներու չենթարկուիլ: Ահա մեր
կացութիւնը, արգե՞ք արտա-
սահման անարող հայութիւնը ի՞նչ
կը խորհի մեզ նկատմամբ, ի-
րենց ուշադրութիւնը դարձու-
ցած են արգեօք հայրենիքի
արգի կացութեան և իրենց ծը-
նողաց վրայ: Միթէ Հայութեան
պարտականութիւնը չէ՞ պէտք
եղած դարմանը խորհելու, քա-
նի որ մենք կաշկանդուած ենք
բանութեան ներքեւ:

Ո.

ՃԵՍԱՐՏՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՅԱՂԹԱՆԱԿԷ

Յերիտասարդ Հայաստանի նո.
36ին մէջ Մեր միջոցառումը վերնագ-
րով և և Ս. ստորագրութեամբ
թաւրիզէն գրուած նամակ մը կար-
դացի. որ իբր թէ «Շայտուսի» մէջ
մեր թաւրիզներուն ուղղած բաց
նամակին պատասխան էր: Ին-
թերցողները ի՞նչ գտան այդ պա-
տասխանին մէջ մեր չհարքուած փա-
տերուն դէմ. — թուրքմարտական
հայհոյանքներ, անձնակառ աւար-
գանքներ, զրպարտութիւններ, մա-
նաւանդ պատուելիական խօսքին ար-
գիտութիւն մը գանազան խնդիրնե-
րու մէջ:

Մենք սովոր չենք անփաստ հայ
հոյել, մեր հակառակորդները որքան
ալ աւազնիւ ըլլան, որքան ալ թու-
րքմարտական հայհոյութիւններու
զլանն, մենք յարգելով լրագրութեան
բարձր կոչումը և գաղափարներու
ազատութիւնը, միայն փաստերով կը
պատասխանենք:

Ա. Տ. ի նամակը կարգացող թաւ-
րիզիները անշուշտ ծիծաղելին, ի
բայ առեալ մէկ քանի նարաձորդ-
ներս և կուսակցականները, որոնք
անկասկած տասն անգամ կարդացին
Ա. Տ. ի նամակը և գրուած հայհո-
յութիւններով իրենց այրած սիրտը
զովացուցին: Թաւրիզիներու առաջ
ինքզինքս պաշտպանելու պէտք մը
չեմ զգար, քանի որ եթէ տարի ի-
րենց հետ ապրած լինելով, ինձ շատ
լաւ կը ճանչնան և պէտք չեն զգար
Ա. Տ. ներու յանձնարարականներուն...

Իայց թաւրիզէ զուրս գտնուողները
իրաւունք ունին պահ մը կարծելու
թէ Ա. Տ. ի նամակին մէջ ճշմարտ
կէտեր ալ կան. ահա այդ սխալ կար-
ծիքը չը գոյանալու համար ստիպ-
ուած եմ Ա. Տ. ի գրածները կէտ առ
կէտ հերքել, փաստացի կերպով:

Միջանկեալ կերպով հարցնեմ թէ

այդ մարդիկ զեռ չը կշտացան լիա-
շուրթն հայհոյելէ. տակաւին չը խը-
րատուեցան հնչակեան երկու բա-
ժանութիւնը մէջ տեղի ունեցած եղ-
բայրասպան կոլուներէն, որոնց պատ-
ճառներէն մէկն ալ այդ կարգի ան-
փաստ հայհոյութիւնն է: Ի՞նչ, կը
ցանկան, որ այդ գաղտնի գրութիւ-
նը շարունակուի, մանաւանդ այս
անգամ Դաշնակցականներու հետ:
Այդ մարդիկ շատ կը սխալին, եթէ
կը կարծեն թէ դաշնակցական են
ալ նոյն գաղտնի միջոցներով կը
կուսին իրենց հետ. ես կը կարծեմ
և կը հաւատամ. որ Դաշնակցական-
ները այնքան բարձր կանգնած կըլլան,
որ առանց հայհոյանքի, միմիայն
փաստերով կը զինուորին իրենց հա-
կառակորդներու դէմ:

Ուրիշն, սկզբ մեր փաստերը
ներկայացնելու:
Ա. Տ. կ'սէ. — Վերաւայում թա-
ւած մի այլապիսի կաստայական-գաշ-
նակցական խումբ չորս հինգ տարի
է, ձգտում է ներս խզուիլ և և իր
իր արամադրութեան սակ ամեն
թաւրիզի ուսումնարանները, բարե-
գործական հիմնութիւնները, հո-
գարածութիւնը, առաջնորդարան,
ժողովուրդ, մի խօսքով ամէն բան
իրենց գործիքը կարծեն:

Այս սողորու մէջ կը փայլին յօղ-
ուածագրի պատուելիական գառաժ-
եալ ուզող խորին ազիտութիւնը և
հեռուն չը տեսնուող այլապիսի թիւ-
նը. չորս հինգ տարի է ձգտում է
ներս խզուիլ և իր արամադրու-
թեան սակ ամեն, և և իր խօսքերը
պատական խոչոր սխալներ են. ոչ
թանի չորս հինգ տարիներ է, որ
Դաշնակցութիւնը Լիւաւայում բուն
է գրել, ոչ թէ ձգտում է ներս խզ-
ուիլ և իր արամադրութեամբ: տակ
առնել Լիւաւայի ուսումնարանները
և բարեգործական հիմնարկութիւնը,
այլ նոյնիսկ վերջինը ինքն է ստեղ-
ծել և մարմնացում տուել: Դաշնակ-
ցական գործիք Օրիորդ Սաթիւիկի
անխնայ և աննպի շանքերուն շը-
նորհիւ, և Լիւաւայի ուսումնարանը
ուսումնարան ընտելու անուան ար-
ժանացք է միմիայն և բացառաբար
Դաշնակցականներու շնորհիւ. առա-
նակ տարիներ ատա՛ջ համալսարան
ստեղծ և բարձրագոյն ուսում առած
դաշնակցականներս ամենաշնչին ու-
ճիկներով պաշտօնավարել են, մի-
միայն գաղափարի և ազնիւ ձգտում
ներու համար:

Այս մէկ փաստ:

Եթէ երբէք ձգտում մը եղած է
ներս խզուիլու և այդ բոլորը իր
արամադրութեան սակ ամենու, այն
ալ եղած է հակառակորդ կուսակցու-
թեան կողմէ. ի՞նչու համար ուրանալ
փաստերը և իրողութիւնները. ին-
չու համար մեղադրել կուսակցութիւն
մը, որ կաշխատի պահպանել իր ըս-
տեղծած դրոյները. ի՞նչու համար չը
յարգել հակառակորդին գաղափարի
ազատութիւնը, որը կը հաւատայ
թէ իր ընտրած միջոցներով և ուղ-
ղութեամբ միայն իսկական յառա-
դիմութիւն և օգուտ կարելի է ձեռք
բերել:

Ա. Տ. կ'սէ. — Այս կաստային չը
խոնարհելու պատիւ ունեցաւ թե-
միս առաջնորդ եղիլն Մ. Վ. Սե-
րատեանը և այս պատճառով եկած
օրից մինչեւ օրս դրանց հալածանքին
արժանանալու բազմ ունեցաւ:

Չարմանալի բան՝ մարդիկ երբեմն
կուսակցամուրթեամբ և յաճախ ալ

կուստուրութեամբ կուրացած բաց աշ-
քերով իսկ չեն կարող տեսնել իրա-
կանութիւնը, ճշմարտութիւնը, ու-
րով կը յեղաշրջեն փաստերը և դէպ-
քերը: Արարատ աշխարհ լսեց, որ
Եղիշէն ընտրողները դաշնակցական-
ներն էին, հետեւաբար եկած օրից
չէին կարող հալածել զայն, ընդհա-
կառաւր Դաշնակցութիւնը մեծ զո-
հողութիւն յանձն առաւ հակառա-
կորդ կողմը Եղիշէի հետ հաշտեցնելու,
այս բանին վկայ է առաջնորդարանի
այն ժամանակուայ քարտուղարը:
Միայն դաշնակցականներէն եղաւ
անհատ մը (ամէն անհատ անհատա-
պէս ազատ է հասարակական խնդր-
ներու մէջ իր ուրոյն յարձեք ունե-
նալ), որ քննադատեց Եղիշէի այս
կամ այն սխալ քայլը. միթէ՞ այդ
հրապարակային քննադատութիւնը
հալածել կը նշանակէ: Արդեօք,
նոյնիսկ Ա. Տ. և իր համախոհներ չը
քննադատեցին Եղիշէն, երբոր հա-
կառակափոխական քարոզներ սալ
սկսաւ. պատրաստ եմ իր ցոյց տուած
հասցէին իր համախոհներու անուն-
ները տալ:

Դաշնակցութիւնը այնքան ազնիւ
է գտնուած և գաղափարի ու իր կոչ-
ման բարձրութեան վրայ է գտնուած,
որ Եղիշէն իր ընտրելիէն՝ բնաւ չ
պահանջած իրեն խնարհուիլ, ալ
ընդհակառակը Եղիշէն զեռ թաւրիզ
չը հասած, անոր դրած է որ չեղք
դիրք մը բռնէ, այս կամ այն կու-
սակցութեան չը յարի պաշտօնակալէս,
որպէսզի հասարակական շահերը չը
վտաւզուին կուսակցական կոլուներ-
րով, ինչպէս այդ եղած էր նախորդ
առաջնորդ օրով և եղաւ իր օրով:
Այդ նամակը Եղիշէի գրպանը կը
գտնուի:

Դաշնակցութեան հալածանքը այն
ժամանակ սկսած է, երբոր նկատու-
ած է, որ Եղիշէի բռնած ետական
ու բունակալ դիրքը հասարակական
շահերուն (լաւ իմացէ՛ք, ոչ թէ կու-
սակցական շահերուն, որովհետեւ
Դաշնակցութիւնը կարող է իր մէկ
ներկայացուցիչով ալ իր գործերը
վարել) վնասակար պիտի ըլլայ: Այդ
իրաւունքը ոչ քեզ կարող է վնասալ
կուսակցութեան մը. որ կը հաւա-
տայ թէ զիջողներն ուղղութիւնը
վնասակար է ժողովուրդի շահերուն:
Մեր հակառակորդները (նոյնիսկ Ա.
Տ. որքան կը կուշակեմ Սլահ ծած.
կանուան սակ) իրենց պաշտօնակալ
օրկաններուն մէջ առանց իրաւացի
պատճառի, այլ լոկ կուսակցական
նկատումներով, սկսան հալածել Այ-
վասեան Սրբազանը. ճշմարտ հալա-
ծանքը այդ է:

Այս երկու փաստ:
Դոկ. 4. Փաշայեան-խան
(Շարունակելի)

ՅՈՒՆՈՑ ԱՓԵՐԷՆ

Իզմիր Թուրքիոյ էն նշանաւոր քա-
ղաքնէն մէկն է և ունի մեծ կարևոր-
ութիւն: Մենք պիտի աշխատենք
մերթ ընդ մերթ Շարժումի մէջ պատ-
կերացնել անզական կարեւոր խնդր-
ները շօշափող նիւթեր:
Օրուան խօսակցութեան նիւթը
առաջնորդական խնդիրն է, որ բա-
ւական ժամանակէ ի վեր տեղւոյն հայ
հասարակութեան, Պոստի կեդր. վար-
չութեան և հայ լրագրութեան ուշա-
դուրթիւնը գրուած է:
Առաջնորդ՝ Մեղիքիսիկ Սրբազան

վախճանումէն յետոյ Իզմիրի Առաջնորդական Աթոռը թափուր մնացած է: Պէտք է նոր Առաջնորդ ընտրել: Պէտք է նոր Առաջնորդ ընտրել: Պէտք է նոր Առաջնորդ ընտրել:

Այս Երուսաղէմական հոս ժամանակէն ի վեր երկու քու կէտ ամիս անցան ու մենք անոր ոչ մէկ գործունէութիւնը տեսանք, թէ պէտք կ'ընէ թէ ամենչեւ զարգ խնդրոյ առարկայ ելող զանազան պարագաները ուսումնասիրած է և ասիկ վերջ պիտի մեղմարկէ Գաւառական Ժողովոյ կազմակերպութեան ու յետոյ նոր Առաջնորդի մը ընտրութեան:

Այժմ մենք ոչինչ կուզենք ըսել այդ նոր ընտրութիւններու մասին, ինչպէս նաեւ չենք ալ կրնար ըսել թէ այդ ընտրութիւնները ինչ հետեւանք պիտի ունենան. սակայն հարկ է ըսել թէ Իզմիրի վիճակը, որ մայրաքաղաքէն յետոյ Թուրքիոյ Հայոց համար է՛ն կարևոր տեղերէն մէկն է պէտք ունի այնպիսի Առաջնորդի մը, որ կատարելագոյն ըմբռնած ըլլալով իր պաշտօնին զետեղանքով իր կարողանայ Իզմիրի միջավայրին և հայ համայնքին ամեն կերպով օգտակար հանդիսանալ:

Այն վեգարաւորը՝ որ պիտի գայ բազմի Իզմիրի պէս կարեւոր Աթոռի մը վրայ, նախ պէտք է ուսումնասիրէ Իզմիրի Հայութեան վարքը, բարքը, բնաւորութեանը, վարուի ըստ այնմ: Որովհետեւ այսօր, Իզմիրի մէջ, բացի բարեկեցիկ դասակարգէն ունինք նաեւ այնպիսի ջոջեր — տրիտուր ճշմարտութիւն — որոնց համար եթէ ըսենք թէ բոլորովին պաղպաղեմ են... հայութեանն ու իրենց գրեթէ անուշացած կը գտնեն հայ կոչուելուն համար, ընթերցող պէտք չէ զարմանայ. նորընտիր Առաջնորդը պէտք է խիստ ու անաչառ կերպով հասկցնէ անոնց մարդու մը պարտականութիւնները, արթնցնէ անոնց մէջ սէր դէպի հայութեանը, և կամաց կամաց անոնց քսակին թերտը բանալ տալու աշխատի ի նպատակ բարեկարգողական ձեռնարկներու... բայց ոչ թէ ի նպատակ իրեն:

Յետոյ մեր ապագայ Առաջնորդը ունենալու է վարչական

որակն զի անդոյս վարչութիւնները կանոնաւորելով նոր առաջնորդի մը ընտրութեան ձեռնարկէ ու այդ պաշտօնը կը յանձնէ Երզնկայի նախկին Առաջնորդ Գեր. Տ. Դանիէլ Մ. Վ. Յակոբեանին, որ անցեալ նոյեմբեր 7 ին Իզմիր հասաւ:

Այս Երուսաղէմական հոս ժամանակէն ի վեր երկու քու կէտ ամիս անցան ու մենք անոր ոչ մէկ գործունէութիւնը տեսանք, թէ պէտք կ'ընէ թէ ամենչեւ զարգ խնդրոյ առարկայ ելող զանազան պարագաները ուսումնասիրած է և ասիկ վերջ պիտի մեղմարկէ Գաւառական Ժողովոյ կազմակերպութեան ու յետոյ նոր Առաջնորդի մը ընտրութեան:

Այժմ մենք ոչինչ կուզենք ըսել այդ նոր ընտրութիւններու մասին, ինչպէս նաեւ չենք ալ կրնար ըսել թէ այդ ընտրութիւնները ինչ հետեւանք պիտի ունենան. սակայն հարկ է ըսել թէ Իզմիրի վիճակը, որ մայրաքաղաքէն յետոյ Թուրքիոյ Հայոց համար է՛ն կարևոր տեղերէն մէկն է պէտք ունի այնպիսի Առաջնորդի մը, որ կատարելագոյն ըմբռնած ըլլալով իր պաշտօնին զետեղանքով իր կարողանայ Իզմիրի միջավայրին և հայ համայնքին ամեն կերպով օգտակար հանդիսանալ:

Այն վեգարաւորը՝ որ պիտի գայ բազմի Իզմիրի պէս կարեւոր Աթոռի մը վրայ, նախ պէտք է ուսումնասիրէ Իզմիրի Հայութեան վարքը, բարքը, բնաւորութեանը, վարուի ըստ այնմ: Որովհետեւ այսօր, Իզմիրի մէջ, բացի բարեկեցիկ դասակարգէն ունինք նաեւ այնպիսի ջոջեր — տրիտուր ճշմարտութիւն — որոնց համար եթէ ըսենք թէ բոլորովին պաղպաղեմ են... հայութեանն ու իրենց գրեթէ անուշացած կը գտնեն հայ կոչուելուն համար, ընթերցող պէտք չէ զարմանայ. նորընտիր Առաջնորդը պէտք է խիստ ու անաչառ կերպով հասկցնէ անոնց մարդու մը պարտականութիւնները, արթնցնէ անոնց մէջ սէր դէպի հայութեանը, և կամաց կամաց անոնց քսակին թերտը բանալ տալու աշխատի ի նպատակ բարեկարգողական ձեռնարկներու... բայց ոչ թէ ի նպատակ իրեն:

Յետոյ մեր ապագայ Առաջնորդը ունենալու է վարչական

ընդունակութիւն, որովհետեւ Իզմիրի Հայ գաղութը շատեց ի վեր ապրիկար ու տղէտ կղերականներու հետ ապրած ըլլալով, խիստ աննպաստ գաղափար մը կազմած է դէպի հայ կղերականները որով և կը բացատրուի անոնց պաղ վերաբերուելը դէպի Ե. կեղեցին:

Կրթական գործն ալ, Իզմիրի մէջ, հակասակ իր առաջուան փայլունութեան այժմ բոլորովին աննախ. նա զորութեան մը ենթարկուած ըլլալով կը կարծուի կարող ու բանիբուն վերահսկողի մը, որը նոր գարկ մը տալով անոր, բարեկարգէ զայն: Այսօր օտարները իրենց կրթական հաստատութեանց վրայ այնքան խնամք կը տանին, որ հայ տղայոց շատերը անոնց գրիկը կը նետուին. ուր սակայն զուրկ սոհմային բարբերէ, դժբախտաբար բոլորովին խորը դաստիարակութիւն մը կ'ըստանան, որով և կայլասեանին ամեն կերպով...:

Շարժումի սուղ էջերը չեն ներքուստ երկարորէն և մանրամասն կանգ առնել այս խնդրոյն վրայ: Կրկնընենք, որ պէտք է բառին բուն նշանակութեամբ՝ ճիշտ եկեղեցական մը ըլլայ Իզմիր եկող առաջնորդը, որպէս զի այստեղի հայ համայնքին մեծամասնութեան, չըսենք ամբողջութեան կարողանայ հոգին զանի: Այսօր Իզմիրի Առաջնորդական Աթոռը ունի շատ մը թիկնածուներ որոնց մէջ կան նաեւ երկու Արմաշա կաներ — Բարգէն և Մաշեղ վարդապետներ, որոնք յայտնի են գրական աշխարհի վրայ և իրենց ունեցած նախկին պաշտօնավարութեամբ:

Քանի որ խօսքերնիս Առաջնորդութեան վրայ է, մեր այս թղթակցութիւնը վերջացնելէ առաջ աւելորդ չենք սեպիւր ըսի նաեւ, որ Պուրկարիոյ գաղութը՝ իր առաջնորդական ընտրութեան միջոցին խիստ արժանի ընտրութիւն մը ըրաւ յանձնելու Գեր. Տէր. Ներսէս Եպիսկոպոս Առաջնորդին: Ներսէս Արքայան, մօտ 7 տարի իրեն Իզմիրի մէջ ևս պաշտօնավարած ըլլալով՝ մօտէն ծանօթութիւն ունինք իր գործունէութեան ոգիին մասին իր անցեալ գնահատելի գործուէթիւնը:

Նայրը եւ անհունը, որ զիրենք կը բաժնէր կատարելալ ազատութենէն...

Դատարկագորտի գլխուն մէջ կը վիտային պարզ, որոշ եւ սարսփելի մտապատկերներ քան «անձայր հեռու» ինք: Անոր առաջ կենդանի կերպով յարեց ինչ էին ստեր գոտարանական յարազումները, զրկուելիքներու եւ տաժանակիր աշխատանքի դատապարտուածներու բանտերը, կաշանաւորներու հիւղերը, ճանապարհի միջոցին յոգնեցուցիչ դադարները, ստացապատ ձմեռը, հիւանդոց թիւները, ընկերներու մահը... Դատարկագորտը յանցանորդի գիտակցութեամբ աչքերը թերթից, թեւովը ճակատը սրբեց, որու վրայ փոքրիկ կաթիլներ կային, յետոյ միւս թեւովը սրբեց ճակատը եւ ցաւագին կերպով շուրջը նայեցաւ:

— Իսկապէս, դու տեղ չես հասնիր, նոյնպէս Պատշան ըսաւ — ատինչ տեսակ հետիոտն ճանապարհորդ ես. անգամ մը ինքք քեզ նայէ մորթ եւ ոսկորներ: Դու կը մեռնիս եղբայր:

— Իհարկէ կը մեռնի, ինչպէս կը

գրաւակիւն մ'է արդէն Պուրկարանայոց համար և կը յուսանք թէ մօտաւոր ապագայի մը մէջ անոր մատուցած օգտակար ծառայութիւնները տեսնելու բաղաւորութիւնը պիտի ունենայ Պուրկարանայ գաղութը, միայն թէ պիտի փափաքէինք որ Սօփիայի Մասնախումբը օր առաջ փութար կարգադրել հարկ եղած պարագաները և նորընտիր Առաջնորդը իր պաշտօնատեղին հասցնելու համար ջանար կարեւոր դերու թիւնները ընծայել:

Իզմիր 24 Յունվար 1904 Վարուսան

ՌՈՒՍ-ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հասած վերջին լուրերու արձագանքը մենք չենք կարող չը կրկնել հոս:

Անպարտելի Ռուսիան, որու պիտի որական ոյժէն կակնածէր նոյնիսկ Անգլիա, որու բանակներն կակնածէին Իերմանիան, Սևտրիտն, այսօր իր առաջին քայլին մէջ պարտուեցաւ փոքրիկ ճարտնիայէն: Այսպիսով կը պատկանի յախուռն, յանգուզն ու քաջ մարդուն և ոչ թէ զօրաւորին: Այդ փոքրիկ քաջը մենք ծափահարելով, կողջունենք իր տարած առաջին յաղթանակը:

Տօրպէտօի միջոցաւ յօգս ցընցած են երեք Ռուսական մեծ զբարահաւորներ, որոնցմէ երկուքը Սարի նաւատորմի ղեկավարներն էին: Երկաթեայ հսկայ զանգուածները կանգնած էին Պորթ-Սթրիտի մէջ հպարտ ու արհամարհոտ, սպասելով մեծ ճակատամարտներու և մեծ փառքի, երբ ճարտնական երկու պղտիկ տօրպէտօներ լուռ ու անձայն իրենց մօտենալով կրակ արձակեցին ու անյայտացան...:

Այս անգրանիկ յաղթութեան ըստ յ կան ազգեցութիւնը մեծ

ՄԹՆՁԱՂԻՆ
(Պատմութիւն)
ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ
1
ԵՐԱՋՆԵՐ

Ոստիկանները ազատ կեանքի պատկերներ կերեւակայէին, զոր բը նաւ ապրած չէին: Արդեօք մի ժամանակ անոր պատկանողներու մտապատկերն էին, զոր իրենց յիշեցնել կուտային, թէ սպառ կեանքի գապարտները մարմնով ու արիւնով իրենց շատոնց մեռած նախահայրերէն իրենց ժառանգութիւն էր մնացած: Աստուած միայն գիտէ աս —

Առաջինը, որ լուրսիւնը խզեց նիքատր Սպառնիկովն էր, որ մինչեւ հիմայ բառ մը չէր արտասանած, արդեօք դատարկագորտի կախարգական երջանկութեանը կը նախան-

ձէր կամ արդեօք կըզգար թէ գորշադրն մտախիռուղի եւ թխակարմիր ցեխի հետ չէին ներդաշնակուեր երջանկութեան կրակները, յամենայն զէպս դատարկագորտին մտայլուած նայելով ըսաւ:

— Ըսածնեղ ճիշդ են, այդ ամէնը շատ գեղեցիկ եւ լաւ, սակայն եղբայրս, դու երբէք չպիտի հասնիս այդ ազատ վայրերուն: Ինչ կը խորհիս երեք հարիւր վերստ անցնելէն յետոյ կուզես որ հօգիտ աւանդես, Տես, որքան շնչասպառ կըլլաս: Վեց վերստ եւ միայն քալեր եւ դեռ չես կրնար ուժերդ հաւաքել:

Դատարկագորտը կամաց մը դարձաւ նիքատրիս եւ երջանիկ ժպիտը գէմքէն չըսեցաւ: Ան սարսփով ու յանցանորդի մը նման ոստիկանին պատկանելի դէմքին նայեցաւ և անշուշտ միտքը բան մը ընկաւ եւ գլուխը կախեց: Լուրսիւնը վերստ կուտ... երբեք ալ կը մտածէին...

Ոստիկանները գիտակցութիւնները կը պրկէին գոնէ երեւակայութեամբ պատկերացնելու այն, ինչ որ Աստուած միայն կրնայ, այսինքն ան-

նայ այլեւս տանիլ այս վիճակը, ըսաւ նիքատր: — զանի իսկայն հիւանդանոց կը տանին... անպարտաւոր կը տանին:

Հօր եւ մօր խաբուածը սարսփով կը նայէր իր գուժական ընկերներու հանդարտ դէմքերուն եւ առանց գըլխարկը վերցնելով եռանդով կը խաչակնքուէր... Ամբողջ մարմնով կը զոզար, գլուխը կը շարժէր, եւ կըսէր գաղափարել վրան կոխուած թրթուրի մը պէս...

— Դեհ ժամանակ է, առաջ երթուր, ըսաւ նիքատրը ոտքի ելլելով — բաւական հանգստացանք:

Վայրկեան մը յետոյ երեք թափառականներն ալ կը քալէին կեղտոտ պողոտային երկարութեամբ: Դատարկագորտը աւելի կորացած էր եւ ձեռքերը թեւեղներու մէջն ածելի խորունկ խոթած էր:

Պատշան լուռ էր...

ՎԵՐԱ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

եղաւ, ճարտնի զինուորական վարկը բարձրացաւ, հարուած մը ստացաւ մեծ հսկան... և տային աստուածները, որ ան թաղուէր Խաղաղականի եօթը խորթորատ- ներուն մէջը...

Մարզպետներ

ՀԱՐՑՈՒՄ ՄԵՐ

Պ. Աւետիս Մելիտոնեանին կող- դենք հետեւեալ հարցումը:

Ժամանակէ մը ի վեր անկողմ- նակալութեան դիմակի տակ, բա- ձարձակօրէն միակողմանի կեր- պով, թէ հնչակեան ներկայա- ցուցչին բանախօսութեանց մի- ջոցին և թէ տեղական թերթի մը անցեալ թիւին մէջ, վերա- կազմեալներու թմբուկը կը դար- նեաւ Միսոն, Չիթչեանը ինչո՞ւ սպաննեցիք, 13 հոգիները ին- չո՞ւ արտաքսեցիք պռաւով: Ետտ լաւ:

Միսոն, Չիթչեանը դեռ չըս- պաննուած այդքո պաշտպանած սաղաթէլական խմբակի իրենց պաշտած կուռքը, որուն առաջ մեծ ու պզտիկ, «Անահիտ»էն մինչեւ «Սրբաւոր» 7 տարի շա- րունակ կերկրպագէին երկինք բարձրացնելով, այսինքն իրենց Եէֆ Արփիարը ինչո՞ւ յախտեան- կան լուծեան դատապարտել ու- զեցին, ճիշդ այն պահուն երբ Արփիար իր այդ ձագուկները կասկածելի իմբակ կ'անուանէր: Այս խնդրով ալ ինչո՞ւ չը հետա- քրքրուեցար, եթէ «միականի» մը չէիր:

Սագունիի, Համրի, Որսորդի և Նազարէկի սպանութիւններու և փորձերու համար բան մը չի պիտի հարցնեմ հիմայ:

Արփիարին դաւաճանութեանը համոզուած ըլլալով էր, որ ըս- պաննելու զեցին զայն, չէ՞ թէ ի- ղենց տօլանտրճիական խմբակ մը ըլլալը Արփիար հրապարակ հա- նելուն համար, եթէ միականի մը չես և հայ յիշափոխութեան մէջ անցած դարցածներով հետաքր- քրուող մը, ի հարկ է համոզում մը գոյացուցած ես այս խնդրին վրայ ես:

Կրնա՞ս պատասխանել: (*)
Յարութիւն Խաչիկեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ ԶԱՐՈՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄ

Չորեքշաբթի կէս օրէ ետք Յարը պատերազմ հրատարակեց ձարտնի դէմ:

Ահա Յարի յայտարարութենէն կտոր մը. «Առանց մեզ լուր տա-»

(*) Ասով կը փակենք անհատական հարցումներու համար մեր սիւնակ- ները:

Խ. Մ.

լու, թէ պաշտօնական յարաբե- րութիւններու խզումը պատե- րազմ կը նշանակէ, ձարտնի կա- րգաւարութիւնը հրաման տուած է Բորթ-Արթուրի մեր նաւատորմի- զին վրայ յարձակում գործել: Ծովակալ Ալէքսիէվի կողմէն այս տեղեկութիւնը մեզ հասնելուն պէս անմիջապէս հրամանարձա- կեցիք ձարտնի Մարտի կողմը պա- տասխանել զէնքի ոյժով: Ամենա- կարողը թող օրհնէ Ռուսական զէնքերը: — Երբ Հայոց ալե- զարդ Հայրապետը նոյն այդ Ամե- նակարողին անուամբը Յարին ա- զէրսանք կը մատուցանէր, այն ատեն Յարը ի՞նչ կը խորհէր...

— Ըստ Տէյլի Մէյլի Վերական և Սքոլորէյ Բուրուական զրահաւոր- ները ձարտնացիներուն անձնա- տուր եղած են, որմէ 8000 ձա- րտնացիներ Չէմուրօի նաւահան- գիսար ելած և մեկնած են դէպի Սէուլ: Միւս կարեւոր նաւահան- գիստներն ալ գրաւուած են ձա- րտնական զինքերով:

— Ընկղմած են երեք Ռուսական նաւեր:

— Ռուս ծովակալ Ալէքսիէվ Բե- թերսպուրի կը հեռագրէ, որ ձա- րտնական զրահաւորներ յանկարձ յարձակում գործած են ռուս նա- ւատորմի վրայ և երեք նաւեր փնտրած:

— Միացեալ Նահանգներու կա- րգաւարութիւնը Ռուս զենայանին վերստին յայտնած է, որ պա- տերազմի միջոցիւ ինք չեզոք պիտի մնայ: Իսոյց ո՞վ գիտէ, ո՞ր օր նոր քաղաքականութիւն:

— Բէթլեհեմի քաղաքական խորհուրդին կողմէ Յարին ներ- կայացած է պատգամաւորութիւն մը և յայտնած մայրաքաղաքին հաւատարմ հպատակութեան ըզ- զացումները: Ձմրան պալատան մատուռին մէջ Յարի և իր հետե- ւորներուն ներկայութեամբ կար- դացուած են ռուս բանակի յաղ- թութեան համար աղօթքներ:

— Ռուսիոյ յայտնած փափա- քին համեմատ ձարտնիոյ մէջ գտ- նուող ռուսահպատակներու պաշտ- պանութիւնը իր վրայ առած է Թրանսայի զենայանը:

— Բորթ-Արթուրի մէջ կը տի- րէ պաշարման զրութիւն: Թըշ- նամիներու զրահաւորն ըր զար- նուած են իրարու հետ:

— Ռուսիա Մայրաքոյն Արեւել- քի մէջ կազմ ու պատրաստ ունի 240,000 զօրք 100,000 զօրք ալ ճամբայ պիտի ելլեն դէպի պա- տերազմի վայրը:

— Միպերական երկաթուղիի գիծը պիտի յատկացուի միայն զինուորական նպատակներու:

Չորապետ Պուցիլիէվսքի պիտի անուանուի ընդհ. հրամանատար: Մեծ իշխան Պորիս իր սպայա- ղունդով մեկնեցաւ կուռի վայրը:

— Չէմուրօի կռիւը անւած է

5 ժամ, ընկղմած էն երկու ռու- սական նաւեր, նա մըն ալ հրք- զեհուած: Սպասուած զինուոր- ները գերի են ինկած ձարտնա- ցիներու ձեռքը: ձարտնական նաւերը թեթեւ փնտրուած են:

— Ռուս նաւեր, որ 2000 զօրք կը փոխադրէին գերի ինկած են:

— Յարը ծովակալի հագուստով ծովային զինուորներու զպրօցը գացած և ճաւ մը խօսած է, որ- մէ յառաջ կր բերենք հետեւեա- լը: «Ինեղ թշնամին առանց մեր կողմէ հրաւերի մեր նաւատոր- միդին վրայ յարձակեցաւ: Ռու- սիա պէտք ունի իր զինուորներու և ես եկած եմ ձեզ ըսելու, որ դուք սպայութեան աստիճանին բարձրացած էք: յուսով եմ դուք ձեր ուժերը կը նուիրէք մեր նա- ւատորմիդին»:

— Անգլիա կուզէ չեզոք դիրք բռնել:

— Ծովակալ Ալէքսիէվ Յարին հեռագրած է. «ձարտնական նա- ւատորմիդը բաղկացած 18 զրտ- հաւորներէ սկսաւ Բորթ-Արթուրը ռմբակոծել: Ամրութիւններէն կը պատասխանուի կրակով: Ժամ մը վերջ ձարտնական զրահաւորները ետ քաշուեցան: Մեր կորուստ- ներն են երկու սպայ, 54 զին- տուր վիրաւորուած, 9 մարդ մե- աւած 4 նաւեր փնտրուած: Բեր- գին փնտր պզտիկ է:

— Միացեալ Նահանգները պա- հանջ դրած են, որ Չինաստան չեզոք մնայ:

— Գերմ. կարմիր խաչը որո- շած է մտնել զինուորական հի- ւանդանոցներու մէջ ծառայու- թեան:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սօֆիայի թրքական ներկա- յացուցիչը կը հերքէ Սուլթանի հիւանդութեան մասին տարած- ւած լուրերը:

— Ինչպէս կերելի Բո. Դուռը և Երևալը շատ գոհ մնացած են Ռուս ճարտնական պատերազմի հրատարակութենէն:

— Դուռը երկու պետութեանց զենայաններուն յայտնած է մա- կեղնական յեղափոխ. խումբե- րու նոր շարժումներու մասին տեղեկութիւններ, ուր կը սուր թէ 400 հոգիէ բաղկացած չէ- թա մը երեւցած է Յիլիպէի կող- մերը և տեղական պաշտօնեանե- րու քիթին տակ կը նեղէ թիւրք ազգաբնակչութիւնը: Կը յայտնէ նոյնպէս, որ Խարափովի վերա- դարձին խումբերը ներս պիտի արշաւեն: Դուռը կուզէ այսօր- նակ պատճառարանութիւններով ըէֆօրմները ձգձգել:

— Բ. Դուռը կը պահանջէ, որ օտար սպանները թրքական հա- մազգեստ և ֆէս կրեն, օտար- ները զժող են:

— Թիւրքերը իմանալով, որ

մակեղնական ստիկանութիւնը կազմակերպելու համար եւրոպա- ցի սպաններ ճամբայ ելած են, սկսած են զժող. հ. լիեան ցոյցեր ու առաջադրութիւններ բնել: Ա. Բուտուրը կանգ առած է: Պուլ- կարներուն անցագիր չ. տրուիր ճամբորդելու համար:

— Առաջին անգամ ըլլալով Պոլսոյ փողոցներուն մէջ երեւ- ցած է աթոժօպիլ կուռք մը, Ոս- տիկանութիւնը իրար անցած և ձերբակալած է Աթոժօպիլի մէջ նստող մարդիկը և անոնցմէ պա- հանջած, որ երկրէն հեռանան:

Հ Ա Յ Ս Ս Ս Ա Ն

«Յ» յթէ կը գրէ, որ Հայիբու գէմը բաժնի շարագործութիւնն ենրով յայտնի քիւրա աւազակա- պետին Պէշէրի Եէրօի Սուլթանի կողմէ ներուժ շնորհուած է, չը նա լուր, որ Սուլթանը վաշտեք հանած էր զայն փնտրելու հա- մար: Թիւրքերը երկար ատեն անկարող եղան զայն գտնել, հի- մա ինքը երկուցած և կուսակալին շնորհակալութիւն յայտնած է: Պէշօթի և Պիշէրի քուրտ ցե- ղերը կուռի բռնուած են. սպան- նուած են 40 քիւրտեր: Այս շըր- ջանին մէջ գտնուող հայ գիւղե- րը, Ռուբէն, Նեղինիւ և Նար- թարիկ ծանր փնտրուած են կրած: Հայերու ստացուած քին մեծ մա- սը թալանուած է: Կառավարութի- նը անկարող է զսպել: Կուրները կը շարունակուին: Հայերը ըս- տիպուած են իրենց գիւղերը թողուլ ու հեռանալ:

ՍԵՐՊԻՍ

Նախարարական տաղնապը վեր- ջացաւ Սկուպչինայի կազմին փո- փոխութեամբ:

ՇՔԵՂ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Փետրվար Ծին հինգշաբթի ե- րեկոյեան ժամը Ցուկէսի «Սանթ- րալ» թատրոնին մէջ:

Ա.

Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Օդրերգութիւն 3 արարուածով

Բ.

Կենդանի պատկերներ

Միջոցներուն պիտի նուագէ

«Սոսակ» նուագախումբը:

Լաւ տեղ գլուելու ուղղութիւնը թող փութան տոմսերը օր առաջ գնել:

«Սիրողներու խումբ»

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна